ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 2-70

«02» 04 2021թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Ազգային ժողովի մեծարգո՛ նախագահ,

2021 թվականի մարտի 31-ին մեր պաշտոնական կայքում հրապարակվել են 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը:

Ձեզ եմ ուղարկում էլեկտրոնային հղումները (տարեկան հաղորդում՝ https://ombuds.am/images/files/3db9cca355fb065bfb01b26973aa02d9.pdf; տարեկան զեկույց՝ https://ombuds.am/images/files/de9d93e7fe42e0fb57562fdea702609e.pdf):

2020 թվականի տարեկան հաղորդման և զեկույցի՝ ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու գրությունները պատրաստ էին ուղարկվելու դեռ մարտի 31-ին: Ի սկզբանե ակնկալվում էր Ձեզ ներկայացնել երկուսը միասին:

2020 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հաղորդման էլեկտրոնային տարբերակի հետ կապված՝ առաջ եկան անսպասելի տեխնիկական խնդիրներ, որոնց լուծման համար Պաշտպանի աշխատակազմն աշխատում է 24-ժամյա ռեժիմով: Աշխատանքների բարդության պատճառն այն է, որ հատկապես նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակով և պատերազմով պայմանավորված՝ այս տարվա տարեկան հաղորդումը նախորդ տարվանից ծավալով զգալիորեն մեծ է և պարունակում է ավելի շատ գրաֆիկական պատկերներ:

Տեղեկացնում եմ, որ այն Ձեզ կուղարկվի այսօր՝ օրվա ընթացքում:

Առդիր՝ տարեկան զեկույցը էլեկտրոնային կրիչով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ **ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 2-66

«31» 03 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Ազգային ժողովի մեծարգո՛ նախագահ,

Կից ուղարկում եմ 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցը, որոնք հրապարակվել են մեր պաշտոնական կայքում 2021 թվականի մարտի 31-ին:

Առդիր՝ տարեկան հաղորդումը և տարեկան զեկույցը էլեկտրոնային կրիչով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ